



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 04/2023

ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

17 նոյեմբերի 2023 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Կառավարության անդամների և Կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարների ու նրանց տեղակալների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգման շրջանակում իրականացված Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանի 2022 թվականի շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) ներկայացված տվյալների ստուգման արդյունքները.

ՊԱՐԶԵՑ

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և հաշվի առնելով Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության 2023 թվականի անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով հաստատված միջոցառումները, իրականացրել է Կառավարության անդամների և Կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարների ու նրանց տեղակալների 2022 թվականի շահերի տարեկան հայտարարագրերի ստուգում:

Նշված ստուգման շրջանակներում, վերլուծելով Արմեն Կոտոյանի կողմից ներկայացված Հայտարարագիրը, Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

1. Արմեն Կոտոյանը ստանձնել է Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը **2018 թվականի սեպտեմբերի 13-ին** (Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պաշտոնական կայքից իրական ռեժիմում ներբեռնված տեղեկատվություն):
2. Արմեն Կոտոյանը 2018 թվականի սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակով ընտրվել է Երևան քաղաքի **ավագանու անդամ** (Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքից իրական ռեժիմում ներբեռնված տեղեկատվություն):
3. Հայտարարագրի՝ «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտներ» բաժնում, Արմեն Կոտոյանը ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված եկամտից բացի հայտարարագրել է **աշխատանքի վարձատրություն** (612,000 դրամ) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից:
4. Հանձնաժողովն Արման Կոտոյանի կողմից ներկայացված Հայտարարագրի վերլուծության արդյունքում՝ 2023 թվականի հուլիսի 26-ին N01/1729-2023 գրությամբ վերջինից պարզաբանում է հայցել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված եկամտի վերաբերյալ:
5. 2023 թվականի օգոստոսի 4-ին Արմեն Կոտոյանը թիվ Մ-3287-2023 գրությամբ ներկայացրել է պարզաբանում, որով հայտնել է, որ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացված եկամտի տեսակն իր կողմից ներկայացվել է որպես աշխատանքի վարձատրությունից ստացված եկամուտ, քանի որ բանկի կողմից տրամադրված քաղվածքում «գործարքի նկարագրություն» դաշտում գրված է աշխատավարձ, սակայն վերջինս, համաձայն Երևանի

քաղաքապետարանի 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ Ն/39731-23 գրության՝ որպես **Երևանի ավագանու անդամ**, 2022 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից ստացել է **ամսական դրամական փոխհատուցում**՝ նվազագույն աշխատավարձի չափով (75.000 ՀՀ դրամ):

Մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին) «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող** անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել **իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները **պաշտոնում նշանակվելուց** (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի **1-ին մասով սահմանված պահանջների կատարումը**:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները **չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն** պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝ աշխատել քաղաքապետարանի կամ որևէ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում, լինել Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավար, լինել վարչական շրջանի ղեկավար, աշխատել ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, լինել դատավոր, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ, զինծառայող, դատական ծառայող, դատախազության մարմիններում ծառայող:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի չափով:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ **պետական** և **համայնքային**, 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական և հայեցողական:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը հանդիսանում է Կառավարությանը ենթակա մարմին:

Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի պաշտոնը, համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, **պետական վարչական** պաշտոն է, այսինքն՝ նույն օրենքի իմաստով՝ **հանրային պաշտոն**, հետևապես, վերջինիս նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամի պաշտոնը **համայնքային քաղաքական** պաշտոն է, ուստի Օրենքի իմաստով՝ Շուկայի

վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձի համար այն չի դիտարկվում **իրև իր կարգավիճակով պայմանավորված այլ պաշտոն:**

Վերոնշյալ իրավակարգավորումների և սույն գործի շրջանակներում առկա տեղեկատվության համաձայն՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի հանրային պաշտոն զբաղեցնող անձը, միաժամանակ հանդիսանալով ավագանու անդամ, թույլ է տվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում, այն է՝ **զբաղեցրել է իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում:**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 27-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 2-րդ մասով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցել վարույթ:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Արմեն Կոտոյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝



ՀԱՅԿՈՒՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ